

1.	31.03.10	141-Ն	ԼՂՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին	mi sarg vorishum
----	----------	-------	---	----------------------------------



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2005թ.

N 135

ք.Ստեփանակերտ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱՃՈՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի կիրարկումն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

Հաստատել օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման ընթացակարգը:

2. Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը վարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը:

Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշիռը կազմվում և պարբերաբար փոփոխվում է ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող համապատասխան հաշվետվությունների հիման վրա: Այն պետք է պարունակի տեղեկություններ արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերում պարփակված՝ բոլոր տեսակների օգտակար հանածոների պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, գործող կամ նախագծվող արդյունաբերական կազմակերպության հետախուզված ու նախնական գնահատված պաշարներով ապահովվածության մասին:

Օգտակար հանածոների տարեկան հաշվետվական հաշվեկշռի ձևերը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետը:

3. Օգտակար հանածոների պաշարների հաշվառումը կատարվում է պինդ օգտակար հանածոների, ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի հանքավայրերի պաշարների դասակարգմանը (A, B, C₁ և C₂) համապատասխան:

4. Օգտակար հանածոների պաշարների վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացությունը հիմք է ծառայում դրանց՝ պետական հաշվեկշռում գրանցման համար:

Հաշվառման ենթակա են բոլոր տեսակների օգտակար հանածոների հաստատված պաշարները:

5. Օգտակար հանածոների պաշարները հաշվառվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ հանքավայրերի ու տեղամասերի, ինչպես նաև ըստ օգտակար հանածոների տեսակների, դրանց քանակի և որակական տվյալների:

Ամփոփված տվյալների հիման վրա կազմվում է ամփոփ հաշվետվական հաշվեկշիռ:

Օգտակար հանածոների մարված (արդյունահանված և ընդերքից կորսված) պաշարների դուրսգրումը կատարվում է ընդերքօգտագործողների ներկայացրած մարկշեյթերական չափագրումների (հիմնավորում) արդյունքում կազմված հաշվետվական հաշվեկշիռների հիման վրա:

6. Ընդերքշահագործող կազմակերպությունները հաշվետվական հաշվեկշիռները հանձնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող հունվարի 25-ը:

7. Հաշվետվական հաշվեկշիռը լրացվում է ընդերքօգտագործող կազմակերպությունների կողմից յուրաքանչյուր հանքավայրի (տեղամասի) համար առանձին: Հաշվետվական հաշվեկշիռն ստորագրում է կազմակերպության ղեկավարը, գլխավոր երկրաբանը, իսկ պինդ օգտակար հանածոների դեպքում՝ նաև մարկշեյթերական չափագրում կատարողը:

Յուրաքանչյուր օգտակար հանածոյի, ինչպես նաև միևնույն տեսակի, բայց տարբեր որակական հատկանիշներ և արդյունաբերական նշանակություն ունեցող օգտակար հանածոների համար կազմվում է առանձին հաշվետվական հաշվեկշիռ:

8. Ամփոփ հաշվետվական հաշվեկշռում հանքավայրերը խմբավորվում են ըստ շրջանների, որոնցում հանքավայրերը բաշխվում են ըստ արդյունաբերական իրացման հետևյալ դասակարգմամբ՝

հետախուզվող,
շահագործվող,
պահուստային:

9. Արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա երկրաբանահետախուզական աշխատանքների և արդյունահանման արդյունքում չհաստատված պաշարների դուրսգրումը կատարվում է պետական փորձաքննական եզրակացության հիման վրա՝ պաշարների պետական հաշվեկշռում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ